

բայց յամենայն դէպս 18րդ դարու ընդօրինակութիւն մ'ըլլալու է:

Սեպհականութիւն եղած է Տիգրան Թաւրի՝ որ վենետիկի վանքին նուիրած է զայն, 1243 թուահամար ձեռագրին հետ, մէջը արձանագրելով.

« Յիշատակ Յսկորայ Տիգրան
« Ի Գրատուն Սրբոյն Ղազարոս Ի Վենետիկ
« 1826 Դեկտ. 26 »:

Գործը կը սկսի Աղարիձ բառով և կը վերջացնէ Պարպարոն բառով 139րդ էջին վրայ:

Յետոյ կը գրէ « Յտղացս Բժշկական տր. հետի, որ գրաւերն յայտնէ » վերնագրով մաս մը, որ բառարանածնէ գրուած մ'է իրը Համառոտութիւն Անգիտաց: Անպետի բառերուն:

ՏԻԳՐ. ՎԱՐՈՒՄ Յ. ԹՈՐԿՈՒՄԵԱՆ

Վենետիկ — Մ. Ղազար

24 Դեկտեմբեր 1922

(Շարունժակելի)

ՀՆԱԽՈՍԹԱԿԱՆ

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ

Հ Ի Ն Հ Ա Յ Ո Յ Ք Ո Վ

(Շար. տես Բազմավէպ 1924 էջ 11)

ՈՍԼԱՐԻԿԸ

Ա. — Լ. Ի Յ Ք

Հինգ անգամ յիշուած տեսանք ազաւորէն կամ ըստ բնագրին (ἀστυρχαλος), անգամ մը կոճ ալ կոչուած Աղեքսանդրի պատմութեան մէջ, որոյ դէմ Հայկազեանը նոյն յունարէն բառն ունի: Եւ էր այծի կամ ոչխարի ոտից համանուն ոսկրը, միջին դարուն ըսուած նաեւ ձանձ, որ խաղ մը կը կազմէր՝ ինչպէս այսօր, և կը խաղացուէր հետեւալ կրկին կերպերով.

1. Գեռնի վրայ բուրբի շրջանակ մը կը գծէին, ներքուստ երեք շառաւիղներ ձգելով: Խաղակիցներէն մին իւր լիցը կը նետէր անոր մէջ՝ չափաւոր հեռաւորու. թնէ մը: Յետոյ միւսը կը նետէր իրենը, հարուածելով հակառակորդին վէզը, և ջնախով զայն դուրս վանել և իւրը ներս պահել: Յունական հին ձեռք մը վրայ երեք կանայք այս խաղարկը կը խաղան:

2. Կար կոճի ուրիշ խաղ մ'ալ: Անոր չորս երեսներուն վրայ նշանակուած էին չորս անհաւասար թուանշաններ: Հարկաւ ասոնք ներկով շինուած էին, որով ս. Բարսեղ այդ ոսկրները « ներկածոյ » կը կոչէր: Խաղացողն աղոցմէ չորս հատը միանգամայն կ'առնուր և կը ձգէր. և հանդիպած թուերու յարմարութեան համեմատ՝ կը շահէր աւելի կամ պակաս: Հին պատկերի մը մէջ անձ մը մատներուն վերեւ առած լիցերը, նետելու հետ է:

Անոյ մէջ գտուեցաւ տղայի մը կմախքը, որոյ հետ թաղած էին կաւեղէն անօթ մը, լիցերով լի՝ որ էին անոր սիրական խաղակիցները: Մահկանց խաղերը միասին թաղել՝ սովորական էր նաեւ այլ ազգերու: Եւ ուրիշ ապացոյց մ'է այս՝ նոյն խաղի մեր մէջ գոյութեան, և միանգամայն յաւատարմուն մինչև միջին դար և ցայսօր, ինչպէս կը տեսնենք հայ գաւառաց մէջ:

Սիւ դարուն՝ Խաչատուր Կեչառացին կ'որոշէ իրարմէ լիցն ու կոճը, գրելով այսպէս. « ճակգարանս » որ է լից ոսկրեայ, և կոճ՝ որով տղայքն խաղան »: Հակադարանի մեկնութիւնը սխալ է բոլորովին: Բայց մինչև ցարդ Հայաստանի մէջ կը գտանէ կոճէն լիցը՝ անուամբ և արուեստով, երկրորդին մէջ կապար լիցը՝ ներկով: և զոր ի Շիրակ լիցը կը կոչեն, ի Մուշ հոս, և անով կը հարուածեն ու կը վանեն կոճերը կամ ձուները շրջանակէն դուրս: Եթէ հսկն է լիցնելու սովորու.

1. Առնեն բոյ, — 2. Dar. Tulus, — 3. Անդ, — 4. Նոյն՝ I, 1561-62, — 5. Հիպ. I, 16, — 6. Աստ. 109. Ե՛

թիւնս, այսու կրնայ մեկնուիլ դասական լիցք կոչումն ալ, որ արդէն խաւարկին համար ըսուած է, և ոչ բնական ոսկրին:

Բ. — ԳՈՒՆԴՔ

Տրուած վկայութեանց մէջ յիշուած երկու անգամ ըստ յոյն բնագրին (σφαλα), Հելլենաց ու Հոռոմայիցուց ըով ձեւերով եւս ծանօթ խաւարիկներէն մին էր, զոր կը խաղային մանկունք, կանայք և ալքերն ալ: Այդ գունդերը ձիոց բաշով լեցուած էին, ու կերպասով կամ կաշով պատած, և պէսպէս կամ խառն գոյներով զարդարուած. և էին այլ և այլ մեծութեամբ: Խաղալու կերպերը զանազան էին, որոց զխաւարներն էին հետեւեալք:

1. Մին յատուկ էր տղայոց, ուր անոնք կը բաժնուէին երկու խմբի: Գետինը կայծքարով ուղիղ գիծ մը կը շինէին և զնդակը կը դնէին անոր վրայ: Խրաքանչիւր խմբին ետև կային ուրիշ մի մի հետաւոր սահմանագծեր ալ: Խմբերը փոխանակաւ իրարու կը նետէին զնդակը բարձրէն, ուզելով զայն անցնել հակառակորդաց գծէն անդին, որոնք կը ջանային բռնել և յետ նետել զայն: Երբ հակառակորդը հարկադրուէին անցնիլ իրենց գծէն, պարտուած կը համարուէին:

2. Խմբերէն մին կ'առնուր զնդակը, և հակառակ խմբէն միոյն անունը կու տար՝ անոր նետելու համար, որ պիտի բռնէր զայն. բայց կրնար և կեղծել ու նետել որ և է ուղղութեամբ: Եթէ զնդակը հակառակորդաց կողմանէ գետին ընկնէր, և անոնք կը կորսնցնէին թիւ մը:

3. Գնդակը կը զարնէին գետնին, որ կ'ոստնուր և զարնողը զայն վերստին կը բռնէր. ով աւելի շատ յաջողէր բռնել, կը շահէր խաղը: Հին ձեւերու մէջ այս խաղը կանանց ձեռքը կ'երևի, և աւելի անոնց յատուկ կը թուի:

4. Խաղացողներէն մին զնդակը կը նետէր օդին մէջ՝ որքան բարձր որ կրնար, և միւսները պիտի բռնէին զայն: Պրիլուքս՝

որ կը յիշէ այս խաղերը, կը յաւելու՝ թէ յաղթականը թագաւոր կը կոչուէր, և պարտեալն՝ էշ, որուն ինչ ինչ պատիժներ ալ կու տային:

5. Մին կը նետէր զնդակը, և հակառակորդը փոխանակ բռնելու զայն, ափովը կու տար ուժգին հարուած մը, և յետ կը մղէր:

6. Կար նաև երից խաղը, Հոռոմայիցուց ըով ծանօթ կայսրութեան օրով: Գետնի վրայ եռանկիւն մը կը գծէին, և երեք մրցակիցներէն իւրաքանչիւրը բռնած քանի մը զնդակներ, յանկարծակի իրարու կը նետէին ու կը բռնէին միմեկիս: Վրիպածները սպասաւորը կը հաւաքէին ու կու տային խաղացողաց, որոնք իրենց կեցած տեղն անշարժ կը մնային. և ուրիշներ կը համրէին անոնց յաջող թիւերը՝:

Գ. — ԿՈՂՈՓՈՅՔ

Ձայնով ու կազմով դժուարին բառի մ'առջև կը զսնուինք հոս: Ոսկերեբանի թարգմանիչը զայս դրած է բնագրին κεφαλή բառին դէմ, որ կը նշանակէր գլուխ, ծայր, ծագ: Հայկազեան բառգիրքն առաջնորդուելով յոյն բառէդ, կը մեկնէ. «զունդ ծայր ոսկերաց՝ խաղալի տղայոց», ինչպէս արդարեւ յունարէնը կը նշանակէ նաև ծայր ոսկերաց, թէև զայս իբր խաղ չգտայ ցունաց ըով, իսկ հայերէն ծայնն ըստ երևութին կը բովանդակէ կողոփ արմատը, որ ս. Գրոց մէջ կը նշանակէ սակառ պտղոց՝, և յարաբերական ոց մասնելով՝ իբր սակառի հետ աղերս ունեցող իր մը, խաղ մը: Բայց կը կրկնեմ՝ թէ արտաքին է միայն այդ յարմարութիւնը:

Ոչ ալ Ոսկերեբանի բնագրին հետ հետաւոր կամ մերձաւոր կապ մ'ունի մեր կողոփոցը. այլ կը յիշեցնէ ինձ տառա-

դարձնաւ ու քիչ մ'աղաւաղը յոյն կո-
րոփոնին (χαλιδών), որ կը նշանակէր
ծայր, լրումն, և «երբեմն տեսակ մը գըն-
դակ կամ օդալից գունդ (ballon) խա-
ղալու» ըստ կ. Ալեքսանդրի¹: Այս վեր-
ջին իմաստով գործածուած կը կարծեմ
Խղթոց մեկնութեան թարգմանչէն կողո-
փոցը, որ կ'որոշուի միւս յարակից պարզ
«գունդերէն»։ Ոչ կազմութեամբ միայն,
այլ անշուշտ խաղալու եղանակովն ալ²։

Այդ ստարանուն խաղը մեր քով եւս
կամ արեօքը։ Իմ պատասխանն հաստա-
տական է։ Վասն զի եթէ հայ թարգմա-
նիչը յոյն χερσάλχին դէմ կը դէն ուրիշ
յոյն բառ մը, փոխանակ նոյնը պահելու՝
եթէ չկար հայ հոմանիշը, կը հետեի՝ որ
իւր գործածածն ընտանի էր հայ ընթեր-
ցողաց, և ուղղագրութեամբ ալ հետացած
ընագրէն, — ենթադրելով միշտ՝ որ հա-
յակերմ, ինչպէս ըսի վերեւ, և կամ զըր-
չագրի սխալ չէ, — և նշանակած օդալից
գնդին հետ հայացած է, ինչպէս պատահե-
ր է հայ շրթանց վրայ նաև ուրիշ բառերու,
եկեղեցի, փոխառութիւն, որոնք զրոց գիւտէն
յառաջ մտեր են մեր մէջ՝ ականջալուր
աղաւաղ հնչմամբ, և յետոյ նոյն ձայնե-
րով ալ պահուեր են գրութեանց մէջ՝ ա-
ռանց սրբագրուելու։

Արդեւ ամենուն և մեր հարց ալ ծանօթ
էր փաւլից տիկը³, և կամ փամփուշտը⁴,
որ նախագաղափարը կը կազմեն այդ օդա-
լից գնդակին։

Գ. — ԱՆԻՒԻՔ

Մի անգամ յիշատակուած մեր վը-
կայութեանց մէջ Ոսկերեքանէն (τροχιδε)
Անտիոքի մէջ⁵ ուր կը գրէր նա, ծանօթ
էր իբր խաղ ի Յունաստան և ի Հռովմ
ևս, և որոյ ծագումը յունական կը համարի
Որատիոս։

Մեծ ու թեթեւ շրջանակ մ'էր, փայ-
տեղէն կամ մետաղեայ, որոյ բարձրու-
թիւնը՝ հին ձևերու մէջ, սովորաբար կը
հասնի մինչև խաղացող պատանւոյն մէջ-

ըր, և մերթ աւելի վեր ալ՝ խաղացողն
ունէր փոքրիկ և ուղիղ կամ կոր ծայրով
զաւազանիկ մը, որով կը զարնէր շրջա-
նակին ու կը վազէր անոր ետեւէն, ճիշդ
ինչպէս այսօր կը խաղան մեր տղայք։
Մերթ անուին վրայ կ'անցնէին մետաղեայ
շարժուն օղակներ ևս, որոնք ձայն կը
հանէին, և այսպէս ներկայը կ'իմանային
ու տեղ կու տային արշաւող անուին⁶։

Թէեւ մի անգամ միայն յիշուած է այս
խաղը, և այն ալ ըստ յոյն բնագրին,
սակայն նկատելով այս խաղերու նկարա-
գրութեանց հայացումը մեր թարգմանչէն⁷,
իրաւունք կ'ունենանք հաւատալու՝ թէ
խաղիս պահպանութիւնը հայ թարգմա-
նութեան մէջ՝ ապացոյց է և անոր գոյու-
թեան Հայոց քով։

Ե. — ԵՌՆԱՆՆ

Խալարիկներէն մին կը համարիմ զայս,
որ ըստ ձայնին՝ շոխչ կամ շոխդ հանող
գործի մը կը նշանակէ։ Կը յիշէ զայս
Եզնիկ՝ համեմատութեամբ մը, ըսելով
աստեղաց համար՝ թէ «իբրեւ զոնչանն
շրջիցին»⁸։ Նոյնպէս և Ոսկերեքանի թարգ-
մանիչը՝ ժամանակի պնասէր կուսանաց
մասին թէ «այսր անդր ստէպ իբրեւ զշար-
լանն յըջիցին»⁹, ուր «իբրեւ զոնչանն»¹⁰,
յաւելուած է թարգմանչէն Այս վկայու-
թեանց մէջ զգալի է խալարիկն շոխիլ,
ոչ լոկ թաւալմամբ իւր վրայ, այլ շար-
ժելով այսր անդր, նման թափառող ան-
ձանց կամ աստեղաց, Նոյն անունը կը
գործածէ նաև Դատաւորաց թարգմանի-
չը, «Թող զոնչանոնն» և այլն¹¹, ուր քը-
նագրերը մահիկ¹² կը գրէ, ինչ որ շատ
հեռի է շոնչանին հզնկեան և ոսկերե-
քանեան նշանակութենէն. և հաւանորէն

1. Alex. 800. — 2. Հմտ. Dar. Pila, 476. —
3. Սեր. 136. — 4. Կոթ. 191. — 5. Dar. Trochus.
6. Ատմ. 14. — 7. Կոթ. 213. — 8. Ռ. Թ. Բ. Ա.
68. — 9. Դատ. Ը, 26. — 10. Գն. մեթիսիս, որ
յիւս. Գ, 20 մահիկ կը թարգմանուի.

հող «զընչանունն» ազատ թարգմանու-
թեան՝ քան թէ բառին բազմանշութեան
արդիւնքն է:

Բայտ առաջին խմատին՝ շունչանը խա-
ղացողէն ստացած մղմամբ՝ գետնի վրայ
կը դառնար աղմկելով: Այս նկարագրին
մէջ առանց վարանելու կրնանք նկատել
հին աշխարհին (և դեռ մեր օրով ալ)
ծանօթ խաղալիքը, որ գլանաձև էր երբեմն
ու ստորոտը սրացած կոնաձև¹. և մերթ
կոնաձևին վերին մասը շեղակի լայնա-
ցած². Խաղացողը բռնած խարազան մը,
որ կը կազմուէր ձողէ մը՝ վերջացած լա-
րով, կը հարուածէր զայն ստէպ, որով կը
դառնար շրջելով:

Աղոր յաճախ յիշատակութենէն մեր
քով և թարգմանութեանց մէջ անգամ
խառնուելէն կ'իմանանք՝ որ հայ խալար-
կաց մէջ շատ ընդարձակ գործածութիւն
ունէր, ինչպէս էր և Գունաց քով:

Հ. Վ. ՀԱՅՈՒՆԻ

(Շարունակելի)

1. Dar. Turben. — 2. Նոս՝ Flngellum, 1154.

Գ Բ Ա Կ Ա Ն

ՏԱՆԴԵ ԱԼԻԿԻԼԵՐԻ

ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ

ԱՐԶԱՅՈՒԹԵՐԻՆ

□ ▼ □

ԵՐԳ Բ.

Տամդէ կ'ընդունուի առաջին յերկմքը՝ որ Լուս-
նիմ է. զը հարցմէ նրա մոտիկիմ թէ ի՞նչ եմ այն
ընթերը՝ որ իր մէջ կ'իրեւան. եւ մէ՛ յարգելով
ամոր կարծիքը, կը բացատրէ ամոռաց պատմութիւնը:

Ո՛վ դուք բոլորը որ փոքրիկ նաւակով՝
Ունկընդրելու խանդաղակաթ՝ ետեւէն
կու գաք նաւուս, որ երգելով կը ծովէ.

Դարձէք ետեւ, ձեր ափերուն ի խընդիր.
Բացերը մի՛ ելլէք ծովուն, գուցէ զիս
կորսընցնելով աստանդական մուրիք:

Ահօսած ջուրըս եկողքած չէ բընաւ.

Փըլող՝ Պալլասն ինք, առաջնորդ՝ Ապոլոն.

Եւ Սայլն ինծի կը ցուցնեն ինք Մուսայք:

Քիչերըդ դուք որ վիզերնիդ կանուխէն
Բարձրացուցիք հընչականերու սընունդին,
Որով կ'սպրին հոս՝ բայց կը ծնան անյագուրդ,
կըրնաք շատ լաւ անդընդաբոյր ծովուն վրայ

Զըգը ձեր նաւն, հետեւելով ափօսիս,

Եւր տակաին ջուրերը չեն դաշտացած:

Փառահեղներն այն որ կողքիս նաւեցին

Զըգարմացան, ինչպէս ընէք պիտի դուք,

Եւրբոր տեսան Յասոնն եղած հողագործ:

Աստուածակերպ արքայութեան բընածին
Յաւեթ ծարաւն ըզմեզ արագ կը տանէր
Գրեթէ ինչպէս որ կը տեսնէք դուք երկինքն:

Երանուհի վեր կը նայէր, ես՝ իրեն,

Եւ նեւ մը որքան միջոցի մէջ կ'արեւած

Աղբիւնի դուրս կը սընալա՝ կը հաւնչի.

Նոյնքան արագ հասայ ես տեղ մ'ուր քաջեց
Հիասքանչ բան մը դէմքս իրեն. եւ սակայն
Ան որմէ գործըս չէր կըրնար մընալ գաղտ,

Ինձ դարձած այնքան ուրախ, որքան աղուոր
«Երախտապարտ մընքով դարձիր առ Աստուած,
Ըսաւ, որ մեզ առաջին աստղը մընցուց»:

Ինձ կը թըլէր թէ ամպ մը մեզ ծածկել չուրջ,
Լուսափողփող, խիտ, հաստատուն ու զմեծիտ,
Իբր աղամանդ որ արեւէն զարնելէ:

Իր մէջ առաւ ըզմեզ գոհարն յաւերժիկ
Ինչպէս որ ջուրը կ'ընդունի լոյսին շողն,
Եւ կը մընայ ինք անանշատ, անբաժան:

Եթէ մարմին էի, (հոս չ'ըմբռնուրիք

Տարածութիւն մ'ինչպէս ուրիշ մ'անդուրժեց,
Որ կ'ըլլայ երբ մարմին մարմնոյ մըտնէ մէջ),

Ա՛ս պէտք էր մեր իրզը վառէր՝ տեսնելու

Այն էութիւնը, որ մեզի կը ցուցնէ

Մեր բընութեան եւ Աստուծոյ միութիւնն:

Հոն պիտ' տեսնենք ինչ բանի հոս կը հաւատաք՝

Անապացոյց՝ յանդիման, զերդ առաջին

Բուն ճըլմարիտը՝ որուն մարդ կը հաւատայ:

Ես պատասխան տըլի. «Տիկին, ջերմօրէն

Որքան կըրնամ շնորհակալ եմ Անոր՝

Որ հեռացուց մահկանացուն երկինքն զիս:

Բսէ սակայն ինծի ի՞նչ ես սեւ բիծերն

Այս մարմինին, որ վարն երկրի վրայ կու տան

Կայենի շուրջն առասպելներ հընարել»:

Նէ ժըպտեցաւ քիչ մ'եւ ըսաւ ինձ ապա.

«Մարդեց կարծիքն եթէ երբեք սխալի հոն

Որ չի բանար ըզպայութեանց բանալին

Չարմացումի սլաքներն ասկէ վերջ ըզգեք